



44. ՀՈՒՍԵՒՆ ՓԱՅԼԵՎԱՆԻ ՈՒ ՍՈՒՍԱՄԲԱՐԻ ԽԵԶԸԹԸ

Ժուկով-ժամանակով մե քաղաքում կար մե թաքավոր: Էս թաքավորն ուներ իրեք ախճիկ, մեկը միյուսից խորոտ, նըխշուն:

Մե օր կանչում ա ախճիկներին ու խարցնում ա.—Ախճիկներ՛ր ջան, էկեք տենամ՝ ձեզնից որն ա ընձի շատ սիրում:

Ջոչ ախճիկն ասում ա.—Հայրի՛կ ջան, ես չեզի արեւից էլ շատ եմ սիրում: Դու իմ արև հայրիկն ես, ընձի տաքացնում ես: Արևը թե չըլնի, մենք էլ չենք հըլնի, ծառ էլ չի հըլնի, ծաղիկ էլ չի հըլնի: Բոլորին ջանք տվողը արևն ա:

Միջնակ ախճիկն ասում ա.—Հայրի՛կ, ես էլ չեզի լուսնակի չափ եմ սիրում: Ինչքան խորոտ մարթ կա, ասում են՝ լուսնակ ա: Չեզնից խորոտ, չեզնից լավը չըկա: Դու մուլթը տեղն էլ լուսնակի նման լուս ես տալում: Դու իմ լուսնակ հայրիկն ես:

Պստի ախճիկն ասում ա.—Հայրի՛կ, դու իմ աղ հայրիկն ես, ես չեզի աղի չափ եմ սիրում: Աղն ա ճաշին խամ տալում:

Պստի ախճկա խոսկը որ խերը լսում ա, ջղայնանում ա, կանչում ա հիրա խոզարածին, ախճկա թեից բռնում ա, տալում ա խոզարածի ձեռը, ասում ա.—Դե գնա խոզարածի խետ, իչքան աղ ուզում ես, լիզա՛, խամը տե՛ս, խտն էլ խետը:

Վազրին էլ հրամայում ա մե սեղ աղ բառնալ, տալ ախճկան ջհեզ:

Ուոզարածն էր ախճկան առավ գնաց, մե սարի գլխ մե քոլիկ չինեց, կնգան թողեց էտ քոլկի մեջ, հինքը գնաց մե աշխատանք ճարելու: Աստծու հրամանով մե առջ էկավ, քոլկի մոտը նստավ պահակ:

Էս առջը էթում էր, չոր փետ էր բերում, կծով ջուր էր բերում, տալում էր թաքավորի ախճկան, հինքը նստում էր դռան հանգը: Ոչ մեկը սիրտ չէր անում ախճկա քոլկին մոտնա: Առջն էթում էր մե չիչ վիրունի ոխճար, էծ, մարալ բռնում, բերում սաղ տալում էր ախճկան:

Ախճիկը մորթում էր, քոթում, էփում էր, տալում էր առչին, հինքն էր ուտում ու էսենց արբում են: Որ թմմավ ինն ամիսը, ինն օրը, ինն ժամը, ինն բուպեն ու իննը վայրկյանը, էս ախճիկը ցավ ա քաշում: Որ ցավ ա քաշում ա, երգնքից հիշում են Չորեքմուտը, Ուրփաթմուտը, Կիրակմուտը և ախճկան ազատում են: Թաքավորի ախճիկը չոքը ջետին ա տալում, մե խորոտ, թոթոլ ախճիկ ա բերում:

Կիրակմուտը հիրա վզից թզբեղը խանեց, քցեց էս ախճկա վիզը, անունը դրեց Սուսամբար ու ասավ.— Հուր որ լաց լինես, անկերիցս մարքրիդ թնփի:

Ուրփաթմուտն էլ խաչակնքեց, ասավ.— Հենց որ էթաս, ոտներիտ տակը վառթ ու ոեհան բուսի, ճամփետ ծաղիկներով լցվի:

Չորեքմուտն էլ վերցուց, հերեսը պաչեց, ասավ.— Իչքան գլուխտ վանան, լողացած ջուրդ կուրս ոսկի դառնա:

Իրեքն էլ հիրանց օրչնիտքը տվին ու գացին: Թաքավորի ախճիկը բերեց էրեխին լողացուց, տեսավ ջուրը ոսկի դառցավ: Տարավ դուռսը մե տեղ լցեց: Մե տարվա մեջը էնքան ոսկի հաֆկվավ, որ մերը ոսկուց ամբողջ չարեց: Ախճիկն իչքան լացավ, աչկերից մարքրիդ թափան: Մերն ամմեն օր գլուկ-գլուկ մարքրիդը հաֆկում էր, լցում էր մե մեչոքի մեջ ու քլկի պատից կախում: Ախճկա տարին թմմած օրը խոզարածն էկավ, մե խուռջին չլակր: Տեսավ հիրա դռան մոտ մե առչ ա նստուկ:

Վախեցավ, ասավ.— Վա՛յ, վա՛յ, քյասիրություն: Կնիկս թողի գացի, առչերն էկան կնգաս ձերան,— ասավ ու աչկերից թնփեց:

Առչը, որ խոզարածին տեսավ, հելավ վեր ու գնաց: Խոզարածը ներս մտավ, տեսավ կնիկը սաղ-սալամաթ, մե խորոտ էրեխա ձեռին թոցնում ա ու երք ա ասում:

Փաթթվան հիրար, խերը վեռցուց էրեխի հերեսները պաչեց, նստան հիրանց գլխի էկածը նաղլ արին: Թաքավորի ախճիկը տեսավ առչի ուտելու ժամանակն ա, մե դազան միս տարավ, որ առչն ուտա, տեսավ չրկա: Դես ման էկավ, դեն ման էկավ, առչը չրկա:

Շատ ափսոսացին, հըմա ի՞նչ կանին անեն, առչը Աստու հրամանով էր գացե:

Հիմի տենանք ինչ կար խոզարածի խուրջինի մեջը: Խուռջինը բացին: Խոզարածը գլուխը կախեց:

Կնիկը խուռջինի մջից խանեց մե խատ խին դեյրա:

Աղի կնիկն էր տվե, ասեր էր.— Տա՛ր, քո կնիկը կըխաքնի:

Մե խատ խողի բուդ, էս էլ աղեն էր տվե, ասեր էր.— Տա՛ր, կնգատ խետ կուտես:

Մե խատ տիկնիկ, Էրկու ջուխտ թաթ, էս էլ աղի ախճիկն էր տվե, ասեր էր. — Ախճիկ կունենաս, թո էս տիկնիկի խետ խաղա:

Իրեք մանեթ էլ փող ին տվե:

Կնիկն ասավ. — Մա'րթ, հեչ էլ մի' մտածա, մե ամբրոց ոսկի ունենք, մե մեշոք էլ մարքորդ:

Մարթն ասավ. — Կնի'կ, խելքտ թոցրե՞ր ես, թե՞ խորտ ոսկիքն են:

Կնիկն ասավ. — Հիմի կըտենաս, թե հուստ էր:

Բերեց, ջուր տաքցուց, լցեց տաշտը, Էրեխին դրեց տաշտի մեջ: Էրեխեն ձեռները չփչփցուց, մերը գլխին ջուր լցեց, տաշտը լինքը ոսկի լցվավ, էն էլ ոնչ թե պատի կտորներով, ջոջ-ջոջ կտորներով, կուրս ոսկի: Մարթը զարմացավ:

Կնիկն ասավ. — Դե տար չարա' ամբրոցի վրեն:

Մարթը ներս մտնելուց ամբրոցին ուշիկ չէր դառցրե: Հելավ դուս, ամբրոցը տեսավ, ոսկին դրեց ձիսատ տեղը:

Էս քչեր քնան, հառավոտ մարթը հելավ գնաց քաղաք, մե խինգ հարգանե պալատ չինել տվեց, Էրկու ամսից ետո տեղափոխվան հիրանց պալատը, ոսկեքն էլ սելով կրեցին, լցին գեղգամիքը: Թո ըստոնք ըստե ուրախ աբրեն, մենք խաբար տանք թաքավորից:

Թաքավորը ջոջ ախճիկը տվեց վազրի տղին, միչնեկ ախճիկը՝ վաքլի տղին, հըմա խառնի ժամանակ հիրանց պատի ախճկա ու խոզարած փեսի տեղակը չըտվին:

Օրերից մե օր թաքավորի կնիկն ասավ. — Թաքավո'ր, անխիսճ գործ բռնիր, ախճկա թևից վերցրիր ու դուս թալիր, չես ասում՝ ինչ հելավ, ինչ չելավ, բա դու խեր չե՞ս, բա էն ախճիկը քո Էրեխեն չի՞:

Թաքավորն ասավ. — Հիրա սիրած մե սել աղ եմ տվե, թո ուստա աբրի, էտ տեսակ Էրեխին էլ ի՞նչ տամ:

— Չէ', թաքավո'ր, — ասավ կնիկը, — լավ չարիր, մարթ հղրկա էն քոլիկը, տենան սա՞ղ ա, մեռե՞ր ա, թո բերեն մեր տունը, դագե-րը կըպախա, կաբրի, մեխկ ա:

Թաքավորը մարթ հղրկեց քոլիկը, տեսան քոլիկը դառտակ, մարթ չըկա: Թողին, էկան թաքավորին ասին, որ քոլիկը դառտակ ա, մարթ չըկա, քոլիկ մոտ էլ շատ օսկոռ կա, կարող ա պատահի, որ ջեւերը յա առչերը խոզարածին էլ, կնգան էլ ճերեր են: Թաքավորն ու թաքուհին թողին չոքերը, տփին հիրանց գլխը: Որոշին ման գան, հաստատ հիմանան, թե ինչ ա պատահե խոզարածին ու թաքավորի ախճկան: Մարթ հղրկին քաղաքները ման գալու: Թո ըստոնք էթան ման գալու, մենք դառնանք խոզարածին ու հիրա կնգան:

Եփ նոր տան մեջ լավ տեղավորվան, ամմեն բան հիր տեղին կարքի բերին, պակաս-պուատը թմմեցին, թաքավորի ախճիկը խո-

զարածին ասավ.—Մա'րթ, բե մեր Սուսամբարին կնքենք, հո էս էլ սարի գլոխը չի՞, էրեխեն հընչի անկնունք մնա, ի՞նչ ա, փարք Աստծու, ամմեն բան էնքան ունենք, որ աշխարքն էլ թնփի ուտա, էլի բան չի պակսի:

Սոզարածն հավելի ուրախ էր: Ի՞նչ ա, մե տասը վեղրո ջուր չի՞ն կանա ախճկա վրեն հավելի լցեն:

Բերին կնընքի պատրաստութուն տեսան:

Կնիկը մարթին ասավ.—Գնա իմ խորը, մորը, քուրերին, փեսեքին կանչա՛:

Սոզարածը գնաց, տեսավ թաքավորն ու թաքուհին նստած լալում են:

Բարև տվեց, խարցուց.—Թաքավո'րն ապրած կենա, հընչե՞ք լալում:

Թաքավորն ու թաքուհին խոզարածին չըճանչցան, դե հո՞ւստը ճանչնին, խոզարածը վաճառականի թազա չորեր էր խաքե, ոսկե չամար էր կապե, գլխին բուխարա փափաղ էր դրե:

Թաքավորն հիմացավ, թե վաճառական ա, էկել ա իրավունք առնի, որ աբրանքը ծախսա:

Ասավ.—Բազրգյան, դու էկեր ես, որ իրավունք առնես, քո աբրանքը ծախես, չեզի իրավուքն եմ տալում, գնա աբրանքտ ծախա՛, մեզ էլ դարդ ունենք, թող մեր դարդով տապկվենք: Ինչ գործ ունես, նորից մեր դարդը թազացնում ես, գնա՛ քո բանի:

Սոզարածն ասավ.—Թաքավո'րն ապրած կենա, որ իրավունք ես տվե խոսալու, իրավունք տու քո դարդն էլ հիմանալու, գուցե էսենց դարդ ա, որ ես կանամ մե ճար անի:

Թաքավորն ըստե դսն արավ հիրա պստի ախճկա գլխի էկածը: Ըտու խըմար էլ մարթը-կնիկ նստուկ լալում են:

Սոզարածը տեսավ, որ էտ ա թաքավորի լալու պաճառը, ասավ.—Թաքավո'րն ապրած կենա, քո դարդին ես դարման կանեմ, քո ախճիկը սաղ-սալամաթ ա, թոռ էլ ունես, լավ աբրում ա:

Թաքավորն ու թաքուհին տեղից վեր թռան, փաթըթվան խոզարածին:

Սոզարածը էրկսին էլ հանգստացրեց, ասավ.—Էլեք էթանք մեր տունը, ես ձեր խոզարած փեսեն եմ, ախճիկտ հղրկեր ա որ ձեզ էլ, հիրա քուրերին էլ, փեսեքին էլ, նազիր-վազիրին էլ տանեմ մեր տունը, էսօր իմ ախճկան՝ Սուսամբարին կնքում ենք:

Թաքավորն հրամայեց, որ կառեթները լծեն: Սոզարածն ասավ, որ կառեթ լծել պետք չի, հինքը թաքավորին վայել տասը կառեթ ա բերե:

Թաքավորը կանչեց նազիր-վազիրին, փեսեքին, ախճիկներին, նստան կառեթները, գացին պատի ախճկա տունը: Գացին տեսան ի՞նչ տուն, Թաքավորի պալատից էլ լավը: Թաքավորն ախճկանից ներողութուն խնդրեց, նստան ճաշի:

Ճաշը բերեցին, Թաքավորը ճաշը դրեց բերանը, տեսավ ալնի յա, ասավ.—Ախճի՛կ ջան, մտեա գացեր ա ճաշի մեջը աղ քցես:

Ախճիկն ասավ.—Ձէ՛, հայրի՛կ ջան, մտես չի գացե, աղը չեզի դուր չի գալում, ըտու խըմար էլ աղ չեմ քցե:

—Այ տեղը բերի՛ր, ախճիկ ջան, լավ ամոթանք տվիր, էսքան վախտ հըլը ընձի ամոթանք տվող չէր հելե:

Լավ քեֆ արին, թողին գացին:

Ժամանակը չուտ ա հընցնում ա:

Սուսամբարը դառցավ կալաթա խնձոր, տասնըօխտը տարեկան մե էնենց ախճիկ, որ չուտես, չըխմես, քչեր-ցերեկ ըտրան թամաչա անես:

Մե օր ըտոնց քաղաքը մե փայլեան էկավ: Էտի Հուսեին փայլեանն էր: Հաչեքը զարկին, չրիղը կապին, փայլեանը հելավ չրդի վրեն, աչկը հընգավ Սուսամբարին:

Շրդից հիչավ, էկավ Թաքավորի հառեչը կայնավ:

—Թաքավորն ապրած կենա,—ասավ Հուսեին փայլեանը,—ես քսանըխինգ տարեկան եմ, կնիկ չունեմ, աչկա հընգավ էն ա խորոտ ախճկան: Թե էն ախճիկը ընձի տաք, կըխաղամ, թե չըտաք, չեմ խաղա:

—Ո՞ր ախճկան,—խառցուց Թաքավորը:

—Այ էն ախճկան,—ցույց տալով Սուսամբարին՝ ասավ Հուսեին փայլեանը:

Թաքավորը ծծղաց, ասավ.—Էտ իմ թոռն ա, Հուսեին փայլեան, էնի հիրա գլխի տերն ա: Ուառցրո՛ւ, թե կառնի, կըտանք, թե չառնի, յա խաղա՛, յա թող գնա՛, էլ անուն չըտաս:

Հուսեին փայլեանը գնաց Սուսամբարի մոտը, իրավունք առավ, խոսաց, առաջարկութուն արավ:

Սուսամբարը չըխոսաց, հըմա գլխով համաձայնություն նշան արավ: Ըտուց ետո Հուսեին փայլեանը հելավ չրդի վրեն, ինչ չնորք ուներ, նշանց տվեց: Հիչկում էր Սուսամբարի յանը, թռնում էր երգիներ, էլի յավաչ հիչնում չրդի վրեն:

Հըմնի բերանը բաց էր մացե:

Ախճիկները էրնեկ ին տալում Սուսամբարին, որ էս տեսակ լավ տղա առավ:

Հենց էտ օրը Հուսեին փայլեանին ու Սուսամբարին նշանին: Հուսեին փայլեանը Սուսամբարին նշան բերեց օխտ ականան մատ-

նիք: Ակները մատի վրեն օխտը գույնի լուս ին տալում, ոնց որ աստղ հըլնին:

Սուսամբարի խետ նշանվելուց հետո Հուսեին փայլեանը քառասուն օրով իրավունք առավ, որ էթա հիրանց քաղաքը, խառնսի պաղդրաստութուն տենա ու գա Սուսամբարին տանա:

Հիմի մենք խաբար տանք Սուսամբարի խորքուրից: Սուսամբարի խերը՝ խողարածը, մե չար քուր ուներ: Եփ էկավ խառնսի օրը, խորքուրը Սուսամբարին հիրա տունը տարավ զոնախ, որ իփրև տնացիքի խետ «մնաք բարով» անա:

Էստեղ Սուսամբարի անկերը խանց, քոռցրեց, տարավ մե կարմնջի տակ քցեց, չորերը բերեց խաքցրեց հիրա ախճկան, հերեսը թող քցեց ու հենց խառնսվորները էկան, ճերըխում անեն, նստցուց ֆայտոնն ու փեսի խետ հղրկեց, գնաց: Սուսամբարի աչկերն էլ էնքան սիրուն ին, որ խանելուց ետո էլ լուսի նման վոթվոթում ին: Էս անկերն էլ մերը քցեց ախճկա ջերը, ախճիկը տարավ: Թո ըստոնք էթան:

Հիմի խաբար տանք Սուսամբարից:

Սուսամբարը իրեք օր մնաց կարմնջի տակը, էնքան լացավ, որ չորսբոլորը մարքարիղներով լցվավ: Էտ լացի ժամանակ մե ծեր մարթ, էչը բարցած մեշից ցախ էր տանում, լացի ձենը լսաց, հիչավ կարմնջի տակը, տեսավ մե քոռ ախճիկ, հերեսներն արնվա, հունքուռ-հունքուռ լալում ա, չորսբոլորն էլ մարքարիղներով լցված: Ուռցրեց, հիմացավ, որ անտեր ախճիկ ա, բերեց էչի բեռը թափեց կարմնջի տակը, մարքարիղները հաֆկեց լցեց տոբրակը, Սուսամբարին զրեց էչի վրեն ու տարավ հիրա տունը: Էս ծեր մարթը օխտ ախճիկ ուներ, օխտն էլ մացեր ին տունը, չանիք ին, տարող չըկար, ջհեզի ծախ չունին: Ախճիկները, որ տեսան խերը փետի տեղը մե քոռ ախճիկ ա բերե, ծծղալով գացին մորն ասին:

Մերը ծծղաց, ասավ.—Ձեր խերը խելքը թոցրեր ա: Օխտը սաղ ախճիկը չի կանում մարթի տա, հիմի էլ քոռ ախճի՞կ ա բերե:

Դուս էկավ, տեսավ հերեսն անվա, արնոտ, մե շատ խորոտ, քոռ ախճիկ:

Էչից հիչցրին, բերին տուն, մարթն ասավ.—Ա՛յ կնիկ, որտեղ օխտ ախճիկ, էստեղ էլ ութ ախճիկ: Անտեր ախճիկ ա, տար լողացրո՛ւ, խա՛ց տու թո ուտա, չանի ես էթամ փետը բերեմ, ետո կըխոսանք:

Կնիկն էլ, ախճիկներն էլ բերին Սուսամբարի հերեսները լվացին, խաց դրին ճերավ, ջուր տաքցրին, լողացրին, տեղ քցին, օխտը տարվա մեռելի նման քնավ:

Չէ՞ որ իրեք օր է՛ր քնե, լացեր էր:

էս չնսիր մարթի կնիկն ու ականիկը մացին զարմացած: Ուզեցին լողացրած ջուրը տանեն որ թնփեն, տեսան ջուրը տաշտի մեջը ոսկի յա դառցե:

Պախեցին, խերն էկավ, ասեցին: Խերն էլ զարմացավ: Ըստոնք սկսին հարստանալ: Տուն չինին, տան մշի աբրանք առան, ականիկներն օխտն էլ քառասուն օրվա մեջ մարթի գացին:

Հըմա բիձեն չատ տխուր էր, որ Սուսամբարը քոռ ա: Հիմի խաբար տանք Հուսեին փայլեանից: Ախճկան տարավ Հիրան տունը: Քառասուն օր կնիկը մնաց փառղի տակը, թողն հերեսին: Քառասուն օրից ետո հերեսը բացեց, տեսավ Սուսամբարը չի, տփեց, տնից դուս արավ, խեճավ ձինը, քեց թբա թաքավորի քաղաքը:

Սրտի հերսից օխտ օրվա ճամբեն էրկու օր գնաց: Գնաց խասավ աների տունը:

Հըլա դուռը չըբացած, Հըլա բարե-բարիլուս չասած, ձեն տվեց.— Հո՛ւր ա իմ Սուսամբարը, տվե՛ք, հընչի՞ ընձի խափիք: Թե Սուսամբարին չըտաք, բոլորիտ կըսպանեմ:

Աներն ու զոնքաջը մացին չիվար, լիզունները բռնվավ, որ խասացին Սուսամբարը չըկա: Մոր ուշկը գնաց: Հուսեին փայլեանի սիրտը կասկած հընգավ:

Աներին խառցրեց.— Հո՛ւր ա Սուսամբարը, ասա՛, աղեյ ուշկը հընչի՞ գնաց:

Խոզարածը անջաղ-անջաղ ասավ.— Ա՛յ բալա, Սուսամբարին դու ես տարե, մենք բղի չեզնից ուզենք, դո՛ւ ես մեզնից ուզում:

Հուսեին փայլեանը պատմեց, որ Հիրա տարածը Սուսամբարը չի, հուրիչ ականիկ ա, դուս ա արե: Զուր բերին լցին թաքավորի ականկա հերեսին, ուշկը տեղը բերին, պատմին, թե ինչ ա հելե:

Գացին թաքավորի մոտ, հալը-ղըսեն արին: Թաքավորը վազրին ու վաքլին տվեց, էթան ականարքը ման գան, Սուսամբարին քթենն, յա մե տեղեկանք ա բերեն: Մե մարթ էլ հղրկեց Հուսեին փայլեանենց քաղաքը, խորքուրի ականկան քթան բերին թաքավորի մոտ: Գաղտնիքը բացվավ: Խորքուրն ասավ, որ հինքն ա Սուսամբարի անկերը խանե ու քցե կարմնջի տակը: Հուսեին փայլեանը, որ կնգան դուս արավ, էտ կնիկը՝ չար խորքուրի ականիկը, մե քանի օր անոթի մնաց, տարավ Սուսամբարի անկերը ծախեց մե վաճառականի, մե քանի օր աբրավ, չընի էկան, բռնին տարան թաքավորի մոտը:

Սուսամբարը որ լսում ա Հուսեին փայլեանը իրանը ման ա գալում, կանչում ա բիձին, ասում ա.— Ափո՛ ջան, հիմի ես ման կըգամ, իմ ոտերի տակը վարթ, հոեհան, ծաղիկ կըթափի, հաֆկա՛ մե մեչոք, տար անկի լուսով փոխա՛, ման կըգաս ու կասես, որ մենակ

անչկով ես ծախսում: Որը քո մոտ կըգա, կասա՝ ես անչկ եմ ծախսում, կէթաս կառնես:

Աստի վերցրեց ծաղիկները ու գնաց Հուսեին փայլեանի քաղաքը: Մարթիք, որ հիմացան անչկով ա ծախսում, զարմացան, ծծղացին, բիծին ձեռ առան:

Բիծին մոտցավ մե վաճառական, ասավ.—էթանք մեր տունը, ես չեզի էրկու խորոտ ըչկ կըտամ:

Գացին, բիծեն տեսավ անչկերը, ասավ.—էսի իմ Սուսամբարին կըսազա, —վարթերն ու հոհհանները տվեց, ըչկերն առավ ու էկավ:

Ըչկերը որ տվեց Սուսամբարին, Սուսամբարը վազուկունից անը քեցե ձախի տեղը, ձախը՝ անչի տեղը: Ըչկերը կպան, կամանց-կամանց լուսն էկավ:

Բիծի չեֆին չեֆ չէր խասնի: Կնգա խետ ձեռ ձեռի տվին, սկսին ախճկա բոլորը ջովանդ խաղալ:

Ըչկերը որ լավացան, Սուսամբարը իրեք գաթա թխեց, մեկի մեչն հիր նշանի մատնիքը դրեց, տվեց բիծին, ասավ.—Աստի, էս գաթեքը կըտանես կըտաս Հուսեին փայլեանին, հուրչի չըտաս:

Բիծեն գաթեքը դրեց մե չորի մեչ, փաթթեց ու գնաց, գնաց, չատ ման էկավ, վերչը Հուսեին փայլեանին քթավ: Վազիրը, վաքիլը ու Հուսեին փայլեանը ձիով էթում ին: Ուզեց կապոցը տա Հուսեին փայլեանին, բայց վազիրը ձեռից առավ ու գացին:

Բիծեն էկավ տուն, ախճկան ասավ, որ տարա, տվի: Էս իրեք ձիավորը կապոցը չըբացին, առան գացին, ճեսօրին չոքցան, նստան մե տեղ, որ խաց ուտեն, ասին.—Մե բացինք տենանք, ի՞նչ կա բիծի կապոցի մեչը:

Բացին, տեսան իրեք գաթա: Գաթեքը կդրեցին, որ ուտեն, մեկի մեչից Հուսեին փայլեանի նշանի մատնիքը դուս էկավ: Էլ ուրախությունից ու վազուկունից խաց էլ չըճերան, ձիանքը խեճան, հընգան բիծի հետեից: Էլ բիծն կըքթենն, բիծեն հասեր էր հիրանց տունը: Ըստե մացին շիվար: Ի՞նչ անեն:

Հուսեին փայլեանն հիմացավ, որ Սուսամբարը սաղ ա, գաթեքը Սուսամբարն ա տվե, հիրա գլոխն ա տփում, թե ես հընչի՞ր բիծին ձեռից բաց թողի:

Բիծեն իրեք օր սպասեց, Հուսեին փայլեանը չեկավ: Հելավ ման գալու: Եռվից որ բիծին չըտեսան, էկան հընգան ոտները:

—Մե խաբա՛ր տու, բիծա՛, հո՞ւր ա Սուսամբարը:

Բիծեն իրեքին էլ տարավ հիրա տունը: Հուսեին փայլեանը, որ Սուսամբարին տեսավ, գնաց փաթթվեց վիզը: Բիծից չնորակալ հելան, Սուսամբարին առան, էկան թաքավորի մոտը:

**Թաքավորը հրաման տվեց խորքուրին էլ, ախճկան էլ կապեն
ձիանքի պոչից ու բաց թողեն:**

**Ձիանքը հրկսին էլ առան, խրտնան, հընգան սարը, քարը: Հիր-
կուն ետ էկան, մնացեր էր մինակ չոր կոտերը՝ պոչերից կապուկ:**

**Նորից օխտ օր, օխտը քչեր խառնիս արին, Հուսեին փայլեանն
առավ Սուսամբարին, գնաց Հիր քաղաքը, աբրան ուրախ ու երջա-
նիկ: Դուք էլ հտենց ուրախանաք, խամսեք ձեր մուրազին:**

